Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Գ.Գրիգորյանի գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

  Գագիկ Գրիգորյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2017թ. հոկտեմբերի 5-ից 6-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄ**

  «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի տնօրենների խորհուրդ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ**

  Մասնակցություն «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նիստին:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նիստում քննարկվել է Ընկերության 2017 թվականի առաջին կիսամյակի գործունեության արդյունքների մասին Գլխավոր տնօրենի հաշվետվությունը, այդ թվում՝ բիզնես ծրագիրը, պայմանագրերի իրականացման ընթացքը, Ընկերության կադրային և վարկային քաղաքականությունները, սոցիալական ծրագրերը, ապահովագրության պաշտպանությունը, տնօրենների խորհրդի որոշումների կատարման ընթացքը:

Միջոցառման շրջանակներում քննարկվել է նաև «ՀԿԵ» ՓԲԸ-ի գործունեության զարգացման հայեցակարգի մշակման և դիվերսիֆիկացիայի, շարժիչավագոնային շարժակազմի արդիականացման, Ընկերության 2017 թվականի բյուջեի ճշգրտման վերաբերյալ հարցերը, ինչպես նաև 2016 թվականի ֆինանսա-տնտեսական գործունեության

ստուգման արդյունքնում «ՀԿԵ» ՓԲԸ-ի աուդիտորական հանձնաժողովի ներկայացրած դիտողություններն ու դրանց շտկման հետ կապված հարցերը:

«ՀԿԵ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի անդամների քվեարկության արդյունքում հաստատվել է «ՀԿԵ» ՓԲԸ-ի գործունեության զարգացման և դիվերսիֆիկացիայի հայեցակարգի ձևավորման միջոցառումների ծրագիրը:

Հանձնարարվել է «ՀԿԵ» ՓԲԸ-ին 2017թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում մշակել Ընկերության աշխատակիցների աշխատանքի խթանմանն ուղղված միջոցառումների ցանկ, որի արդյունքում նախապատրաստված փաստաթղթերի փաթեթը սահմանված կարգով պետք է ներկայացվի «ՀԿԵ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նիստին:

Քննարկվել է նաև լաստանավով Կովկաս-Փոթի-Կովկաս ամսական երթուղիների քանակի ավելացման հարցը և հանձնարարվել «ՀԿԵ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենին «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի Ֆիրմային տրանսպորտային ծառայության կենտրոնի մասնակցությամբ «Վրացական երկաթուղիներ» ԲԸ-ի հետ համատեղ մշակել լաստանավի միջոցով գնացքի հոսքի ավելացման հարցը: Իրականացված աշխատանքների արդյունքները պետք է ներկայացվեն «ՀԿԵ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի առաջիկա նիստին:

Նիստի ընթացքում քննարկվել է Ընկերության կողմից տեղական երկաթուղային հաղորդակցություններով ուղևորների սպասարկման շարժակազմի թարմացման ծրագիրը՝ շարժիչավագոնային շարժակազմի արդիականացման նպատակով: «ՀԿԵ» ՓԲԸ-ին հանձնարարվել է մշակել առաջարկություններ՝ «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի կողմից Ընկերությանը շարժիչավագոնային շարժակազմի փոխանցման կամ նոր շարժակազմի գնման նպատակով, որը պետք է ներառել 2018թ. բյուջեում: Վերոնշյալ ծրագիրը կքննարկվի ոլորտային Կոմիտեների նիստերի ընթացքում և սահմանված կարգով կներկայացվի «ՀԿԵ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի առաջիկա նիստին:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել 2017 թվականի նոյեմբերին քաղաք Երևանում անցկացնել աուդիտի և ֆինանսների, ինչպես նաև ռազմավարության և զարգացման կոմիտեների համատեղ նիստերը:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ՝

Գագիկ Գրիգորյան
11.10.2017թ.